

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

**ԹՎԱՅԻՆ ՊԱՀՈՑՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԲՈՒՀԻ
ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ**
**Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
գրադարանի օրինակով***

ՀՏԴ: 02(479.25)
DOI: 10.54503/2953-8092.2026.1(7)-78

**ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Վալերի Բրյուսովի անվան պետական
համալսարանի գրադարան**

ORCID: [0009-0005-5725-5877](https://orcid.org/0009-0005-5725-5877)

Հոդվածում դիտարկվում է ակադեմիական գրադարանների դերը ժամանակակից թվային վերափոխումների պայմաններում՝ մասնավորապես շեշտադրելով համալսարանական պահոցների նշանակությունը: Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի (ԲՊՀ) գրադարանի փորձի հիման վրա վերլուծվում է, թե ինչպես են ինստիտուցիոնալ պահոցները նպաստում բուհի գիտական արդյունքի հանրայնացմանը և միջազգային գիտական փրոյեկտում դրա տեսանելիության բարձրացմանը: Քննարկվում են Բաց հասանելիության սկզբունքների ներդրման առավելությունները, պահոցների կառուցվածքային առանձնահատկությունները և դրանց ազդեցությունը համալսարանի վարկանիշի վրա: Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև թվայնացման ճանապարհին հանդիպող մարտահրավերներին, մասնավորապես՝ հեղինակային իրավունքի պաշտպանությանը և տվյալների համակարգման խնդիրներին:

* Հոդվածը ներկայացվել է 08.05.2026, գրախոսվել է 11.06.2026, ընդունվել է տպագրության 18.06.2026:
The article was submitted on 08.05.2026, reviewed on 11.06.2026, accepted for publication on 18.06.2026.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

The article examines the role of academic libraries amid contemporary digital transformation, with a specific focus on the significance of university repositories. Drawing on the experience of the Valeriy Brusov State University (BSU) library, the paper analyzes how digital repositories facilitate the dissemination of institutional research output and enhance its visibility within the international scientific community. It explores the benefits of implementing Open Access principles, the structural characteristics of repositories, and their subsequent impact on university rankings. Furthermore, the study addresses the challenges inherent in the digitalization process, particularly concerning copyright protection and data management issues.

Բանալի բառեր՝ Թվային պահոց, ակադեմիական գրադարան, Բրյուսովի պետական համալսարան, բաց հասանելիություն, գիտական տեսանելիություն, մետատվյալներ:

Ինչպես հղել՝ Հարությունյան, Ն. (2026), Թվային պահոցները որպես բուհի գիտական տեսանելիության բարձրացման գործիք: Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գրադարանի օրինակով, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(7), 78-90.

[https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-78](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-78)

How to cite (APA style): Harutyunyan, N. (2026), Digital Repositories as a Tool for University Scientific Visibility: A Case Study of the Library of Brusov State University, *Herald of the Armenian Library Association*, 1(7), 78-90.

[https://doi.org/10.54503/2953-8092.2026.1\(7\)-78](https://doi.org/10.54503/2953-8092.2026.1(7)-78)

Ներածություն

Թվային պահոցները ժամանակակից ակադեմիական գրադարանների գործունեության կարևոր բաղադրիչներից են, որոնք հնարավորություն են տալիս համակարգված ձևով հավաքագրել, պահպանել և տարածել գիտակրթական բովանդակությունը: Թվային տեխնոլոգիաների արագ զարգացումը և գիտական հաղորդակցու-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

թյան ձևերի փոփոխությունը պայմանավորում են այն, որ ակադեմիական հաստատությունները թվայնացման ռազմավարությունների մշակումը դիտարկում են որպես զարգացման առաջնահերթ ուղղություն: Այս գործընթացը նպաստում է կրթական և գիտական պաշարների առավել արդյունավետ կառավարմանը, ինչպես նաև ապահովում է գիտնականների և մասնագետների կողմից ստեղծված գիտական արդյունքների բաց և անխոչընդոտ հասանելիությունը:

Ակադեմիական հաստատությունների թվային պահոցներում ներառվում են տպագիր հրատարակությունների թվայնացված տարբերակները, այնպես էլ չհրատարակված գիտական նյութերը՝ աշխատանքային փաստաթղթեր, դասախոսություններ, թեզեր, ատենախոսություններ, գիտական հոդվածներ, զեկույցներ, մենագրություններ և այլ գիտակրթական նյութեր: Այսպիսով, թվային պահոցները դառնում են գիտելիքի պահպանման, կազմակերպման և տարածման կարևոր ենթակառուցվածք՝ նպաստելով գիտական արդյունքների երկարաժամկետ պահպանությանը և դրանց միջազգային տեսանելիության բարձրացմանը (WILLINSKY 2009: 11-12; CROW 2002: 4):

Թվային պահոցների կազմակերպման համար մշակվել են բազմաթիվ ծրագրային համակարգեր, որոնցից առավել լայն կիրառություն ունեն DSpace, EPrints, Fedora, Greenstone և CDC Invenio հարթակները: Դրանց կիրառումը հնարավորություն է տալիս ստեղծել արդյունավետ ինստիտուցիոնալ պահոցներ, ապահովել մետատվյալների կառավարման միասնական մոտեցումներ և ինտեգրվել միջազգային գիտական տեղեկատվական միջավայրին:

Թվային պահոցի առավելությունները

Թվային պահոցները ակադեմիական համայնքին առաջարկում են մի շարք առավելություններ՝ հնարավորություն տալով մեկ միասնական միջավայրում կենտրոնացնել հաստատության գիտա-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կան և կրթական արդյունքները, ապահովել դրանց համակարգված նկարագրությունը, բաց հասանելիությունը և երկարաժամկետ պահպանումը: Միաժամանակ թվային պահոցները նպաստում են այնպիսի նյութերի պահպանությանը, որոնք այլ պայմաններում կարող էին մնալ սահմանափակ հասանելի կամ ընդհանրապես կորչել: Այս առումով դրանք հանդես են գալիս որպես գիտելիքի կառավարման և տարածման նորարարական մոդել՝ վերափոխելով տեղեկատվության պահպանման, կազմակերպման և մատուցման ավանդական մեխանիզմները (BARTON, WATERS 2004: 36-38):

Ռեյմ Բրոուն (Raym Crow) ինստիտուցիոնալ պահոցները բնութագրում է որպես թվային գրադարաններ, որոնք հավաքագրում, պահպանում և տարածում են հաստատության մտավոր սեփականությունը կազմող բնօրինակ հետազոտություններն ու գիտական աշխատանքները (CROW, 2002: 25): Նրա գնահատմամբ՝ համալսարանական պահոցները, կենտրոնացնելով մեկ կամ մի քանի հաստատությունների գիտական արտադրանքը, լուծում են մի շարք ռազմավարական խնդիրներ: Նախ՝ դրանք ընդլայնում են գիտական արդյունքների հասանելիությունը և հնարավորություն են տալիս բուհերին վերականգնել վերահսկողությունը սեփական հետազոտական արտադրանքի նկատմամբ: Այս գործընթացը նպաստում է գիտական հաղորդակցության համակարգում մրցակցության ուժեղացմանը, նվազեցնում է գիտական հրատարակչությունների մենաշնորհային ազդեցությունը և բարձրացնում է գրադարանների ռազմավարական ու տնտեսական նշանակությունը: Երկրորդ՝ թվային պահոցները ծառայում են որպես բուհի գիտական գործունեության գնահատման և ներկայացման արդյունավետ գործիք: Դրանք տեսանելի են դարձնում հաստատության հետազոտական ներուժը, գիտական ձեռքբերումներն ու հասարակական նշանակությունը, ինչը նպաս-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

տում է բուհի հեղինակության, միջազգային ճանաչելիության և մրցունակության բարձրացմանը: Երրորդ՝ թվային պահոցները հնարավորություն են տալիս իրականացնել գիտական նյութերի երկարաժամկետ թվային պահպանություն՝ ապահովելով դրանց անվտանգ պահեստավորումը և լուծելով ֆիզիկական արխիվային տարածքների սահմանափակության խնդիրը:

Գործնական նշանակությունից բացի, թվային պահոցները կարևոր դեր են կատարում համալսարանների և առանձին հետազոտողների գիտական տեսանելիության բարձրացման գործում: Բաց հասանելիության սկզբունքների հիման վրա կառուցված այս համակարգերը հնարավորություն են տալիս աշխարհի տարբեր երկրների գիտնականներին օգտվել միմյանց հետազոտական արդյունքներից, նպաստում են գիտական տեղեկատվության ազատ շրջանառությանը, միջհամալսարանական և միջազգային համագործակցության զարգացմանը, ինչպես նաև գիտելիքի ավելի լայն տարածմանը: Արդյունքում, գիտական տեղեկատվությունը հասանելի է դառնում ոչ միայն մասնագիտական համայնքին, այլև հասարակության լայն շրջանակներին՝ խթանելով բաց գիտության և տեղեկատվության ազատ հասանելիության սկզբունքների իրականացումը:

Թվային պահոցի մարտահրավերները

Թվային պահոցի ստեղծման և զարգացման խնդիրները գտնվում են գիտական հանրության մշտական ուշադրության և ուսումնասիրության ոլորտում: Այս գործընթացը պահանջում է տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետների, գրադարանավարների և վարչական աշխատակիցների միասնական աշխատանք և համագործակցություն:

Բաց հասանելիության գործընթացի ապահովման համար անհրաժեշտ է շատ ժամանակ և ջանք, ինչպես նաև հատուկ կանո-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Նակարգ՝ նյութի պահպանության և հեղինակի թույլտվության համար, որն իր հերթին հնարավորություն է տալիս հասանելի դարձնել բովանդակությունը և հանրահոչակել:

Թվային պահոցների կայուն զարգացման և արդյունավետ գործունեության համար առանցքային նշանակություն ունի հետազոտողների ակտիվ ներգրավվածությունը և նրանց մասնակցությունը գիտական արտադրանքի ավանդադրման գործընթացում: Առանց հեղինակների պատրաստակամության՝ իրենց գիտական աշխատանքները պահոցում ներդնելու, ինստիտուցիոնալ հավաքածուն չի կարող ապահովել ոչ միայն կայուն աճ, այլև ամբողջական և համապարզված զարգացում:

Հետազոտողների կողմից պահոցներին մասնակցության բացակայությունը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ հրատարակչական քաղաքականության սահմանափակումներով, հեղինակային իրավունքների վերաբերյալ մտահոգություններով, ինչպես նաև այն ընկալմամբ, որ նյութերի ավանդադրումը պահանջում է լրացուցիչ ժամանակ և չի ապահովում անմիջական գիտական օգուտ:

Ակադեմիական միջավայրում նկատվում է նաև հակառակ միտումը, ըստ որի՝ բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններ որդեգրել են պարտադիր ավանդադրման քաղաքականություն: Այս մոտեցման շրջանակում դասախոսները և ուսանողները պարտավորվում են իրենց գիտական և ուսումնական արդյունքները ներդնել ինստիտուցիոնալ պահոցներում՝ որպես համալսարանի գիտական արտադրանքի մաս: Նման պահանջը հաճախ ամրագրված է համալսարանի ներքին կանոնակարգերով կամ պայմանագրային հարաբերություններով:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Այն դեպքերում, երբ հետազոտական աշխատանքը իրականացվում է համալսարանի ֆինանսավորմամբ կամ նրա ենթակառուցվածքների շրջանակում, դրա արդյունքները դիտարկվում են որպես ինստիտուցիոնալ սեփականություն, և համապատասխանաբար ենթակա են պարտադիր ավանդադրման: Այս մոտեցումը հիմնավորվում է այն հանգամանքով, որ համալսարանը հանդիսանում է գիտական արտադրանքի հիմնական կազմակերպիչն ու ֆինանսավորող սուբյեկտը:

Բացի այդ, բազմաթիվ համալսարաններում դասախոսները և ուսանողները ուսումնառության կամ աշխատանքի ընդունման փուլում ստորագրում են համաձայնագրեր, որոնք սահմանում են նրանց պարտավորությունները գիտական արդյունքների տնօրինման և հրապարակման վերաբերյալ, այդ թվում՝ դրանց ավանդադրումը ինստիտուցիոնալ պահոցներում: Պահանջվում է ահռելի աշխատանք իրականացնել գրադարան-հետազոտող ամուր հարաբերությունների ստեղծման համար: Հետազոտողը պետք է սովորի իր աշխատությունները վստահել գրադարանին (LYNCH 2003:):

Այս գործընթացն ունի ևս մեկ խնդիր՝ պահպանություն և հեղինակի թույլտվություն: Հեղինակային իրավունքի հիմնախնդիրները և ստեղծագործական ընդհանուր արտոնագրման տարբերակները պետք է ներկայացվեն դասախոսներին և հետազոտողներին, ովքեր իրենց աշխատանքները տրամադրում են պահպանության:

ԲՊՀ պահոցի կառուցվածքը և գործունեությունը

Այսօր կրթության և գիտության ոլորտում առաջնային է դարձել գիտական արդյունքների հասանելիության ապահովումը թվային հարթակներում: «Վ. Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի պահոցը հիմնված է DSpace համակարգի վրա և հանդիսանում է բաց հասանելիության սկզբունքով գործող կուտակային

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Էլեկտրոնային արխիվ, որտեղ հավաքագրվում, պահպանվում և տարածվում են համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ապիրանտների և ուսանողների գիտական ու ուսումնամեթոդական աշխատանքները¹:

DSpace-ը MIT գրադարանների և Hewlett-Packard ընկերության համատեղ նախագիծ է. ստեղծում է կայուն, երկարաժամկետ թվային պահոց՝ պահպանելու հետազոտողների ամենամյա տպագիր նյութերի զգալի մասը: Պահոցը ստեղծվել է Եվրոպական Միության կողմից համաֆինանսավորված «Մոլդովայի և Հայաստանի բուհերի հետազոտության կառավարման և հանրահասանելի գիտության կարողությունների զարգացում» ԷՐԱԶՄՈՒՍ-ՄԻՆԵՐՎԱ ծրագրի շրջանակներում²: Այս աշխատանքը ցույց է տալիս, որ գրադարանը ձգտում է անցնել պահպանի դերից այն կողմ՝ ակտիվորեն նպաստելու գիտական հաղորդակցության զարգացմանը:

ԲՊՀ թվային պահոցի բնականոն գործունեությունն ու կայուն զարգացումն ապահովվում է հստակ իրավական դաշտի շրջանակներում: Պահոցը կառավարվում է ԲՊՀ գիտական խորհրդի կողմից հաստատված կանոնակարգի կետերով (ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 2022):

Նյութերը պահոցում պահվում են անժամկետ՝ ապահովելով մշտական հասանելիություն: Այն կառուցված է աստիճանակարգային մոդելով՝ նյութերի դասակարգումը և որոնումը ավելի դյուրին դարձնելու համար: Բաղկացած է հետևյալ բաժիններից՝

Համայնքներ (Communities) - համապատասխանում են համալսարանի կառուցվածքային միավորներին՝ ֆակուլտետներ, ամբիոններ կամ գիտահետազոտական կենտրոններ:

¹ ԲՊՀ պահոց <https://dspace.brusov.am/handle/123456789/15> (17.06.2026)

² Էրազմուս-Միներվա <https://erasmus-plus.am/hy/> (17.06.2026)

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Հավաքածուներ (Collections) - նյութերը խմբավորվում են տեսակով կամ բովանդակությամբ:

Նյութեր (Items) - ներառում է բուն թվային ֆայլը (PDF ձևաչափով) և մետատվյալները:

Պահոցի գործունեությունը հիմնված է միջազգային չափորոշիչների վրա և իրականացնում է հետևյալ գործառույթները՝

✓ Handle համակարգի շնորհիվ ինդեքսավորվում է համաշխարհային գիտաչափական շտեմարանների կողմից,

✓ ապահովում է նյութերի երկարաժամկետ անվտանգ պահպանումը՝ կանխելով տեղեկատվության կորուստը,

✓ հնարավորություն է ընձեռում կատարել որոնումներ ինչպես պարզ բանալի բառերով, այնպես էլ ըստ հեղինակների, տարբերվերի և թեմաների,

✓ նպաստում է գիտելիքի ազատ փոխանակմանը՝ հնարավորություն տալով ընթերցողներին աշխարհի ցանկացած կետից ծանոթանալ համալսարանի գիտական նվաճումներին:

Համալրման ու բովանդակության կառավարման գործառույթն իրականացվում է գրադարանի աշխատակիցների կողմից: Բացի այդ, գրադարանն իրականացնում է թվայնացման աշխատանքներ և համագործակցում է հետազոտողների հետ:

Ամենածավալուն և պահանջված հավաքածուներից մեկը «Բանբեր» գիտական հանդեսի արխիվն է: Այստեղ ներառված են պարբերականի տարբեր տարիների թողարկումները, ինչը թույլ է տալիս հետևել համալսարանի գիտական մտքի զարգացման դինամիկային տասնամյակների կտրվածքով: Հոդվածները դասակարգված են ըստ գիտակարգերի՝ «Լեզվաբանություն և բանասիրություն», «Մանկավարժություն և հասարակական գիտություններ», ինչը հեշտացնում է նեղ մասնագիտական որոնումները:

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Շնորհիվ բաց հասանելիությանը՝ «Բանբեր»-ի հողվածները հասանելի են դառնում միջազգային հետազոտողներին, ինչը բարձրացնում է հեղինակների հղելիության ցուցանիշը:

Պահոցը ներառում է ոչ միայն հայալեզու, այլև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն և այլ լեզուներով աշխատություններ՝ արտացոլելով համալսարանի լեզվաբանական ուղղվածությունը: Օգտագործվում է Dublin Core Metadata Element Set (DCMI) մետատվյալների ստանդարտը, ինչը ապահովում է նյութերի ճիշտ փոխգործակցությունը համաշխարհային գիտական շտեմարանների հետ:

Հեղինակային իրավունքի խիստ պահպանումը ԲՊՀ գրադարանի հիմնարար սկզբունքներից է: Պահոցն օգտագործում է Creative Commons (CC) միջազգային լիցենզավորման համակարգը: Այն թույլ է տալիս հետազոտողներին պահպանել ստեղծագործության նկատմամբ բացառիկ իրավունքները՝ միաժամանակ սահմանելով դրա օրինական օգտագործման, տարածման և մեջբերման պայմանները (օրինակ՝ պարտադիր նշելով հեղինակի անունը):

DSpace հարթակը ապահովում է համապատասխանությունը միջազգային տվյալների փոխանակման ստանդարտներին: Բաց արխիվների նախաձեռնության արձանագրությանը (Open Archives Initiative Protocol for Metadata Harvesting) աջակցությունը թույլ է տալիս արագ հավաքագրել մետատվյալները, ապա գլոբալ որոնողական համակարգերին ավտոմատ կերպով ինդեքսավորել պահոցի բովանդակությունը (OAI-PMH): Միջազգային որոնման համակարգերին համապատասխան մետատվյալների կառուցվածքը ապահովում է գիտական նկութերի հասանելիությունը: Սա ոչ միայն մեծացնում է հետազոտությունների տեսանելիությունը, այլև նպաստում է համալ-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

սարանի հեղինակության բարձրացմանը միջազգային գիտական և կրթական համայնքում:

Պահոցի կարևոր գործառնական առանձնահատկություններից մեկը ORCID (Open Researcher and Contributor ID) համակարգի հետ ինտեգրումն է, որը թույլ է տալիս կապել հրապարակումը կոնկրետ հեղինակի հետ՝ բացառելով անվանակիցների հետ շփոթմունքը և ճշգրիտ հաշվարկելով հղելիության ինդեքսը:

Իրավական պաշտպանվածությունը և միջազգային տեսանելիությունը, ԲՊՀ պահոցը դարձնում են ժամանակակից գիտական հաղորդակցության արդյունավետ գործիք, ինչը նպաստում է համալսարանի գիտական վարկանիշի շարունակական բարձրացմանը:

Եզրակացություն

Թվային պահոցների ներդրումը և զարգացումը հանդիսանում են ժամանակակից համալսարանական տեղեկատվական միջավայրի արդիականացման առանցքային ուղղություններից մեկը: Դրանք ոչ միայն նպաստում են գիտելիքի արդյունավետ կառավարմանը, այլև ապահովում են գիտական ժառանգության համակարգված թվայնացում և երկարաժամկետ պահպանում՝ ստեղծելով բաց և հասանելի ակադեմիական տեղեկատվական տարածք:

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի գրադարանի փորձը ցույց է տալիս, որ թվային պահոցի հաջող գործունեությունը հիմնված է տեխնոլոգիական լուծումների և կազմակերպչական արդյունավետ համագործակցության վրա: Հատկապես կարևոր է գրադարանային մասնագետների և հետազոտողների փոխգործակցությունը, որն ապահովում է գիտական նյութերի ամբողջական հավաքագրում, որակյալ նկարագրություն և կայուն հասանելիություն: Միաժամանակ, բաց գիտության սկզբունքների հետևողական իրա-

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

կանացումը և հեղինակային իրավունքի նորմերի պահպանումը ձևավորում են հավասարակշռված միջավայր, որտեղ գիտական արդյունքները դառնում են առավել տեսանելի և հասանելի՝ չխախտելով իրավական կարգավորումները: Այս մոտեցումը նպաստում է նաև համալսարանի գիտական հեղինակության բարձրացմանը և միջազգային գիտական տարածքում նրա դիրքերի ամրապնդմանը:

Կարելի է արձանագրել, որ թվային պահոցների զարգացումը անշրջելի գործընթաց է, որը պայմանավորված է տեղեկատվական հասարակության պահանջներով: Այն ոչ միայն տեխնոլոգիական նորարարություն է, այլև ակադեմիական մշակույթի փոփոխություն, որը վերափոխում է գիտելիքի ստեղծման, պահպանման և տարածման ավանդական մոդելները՝ դարձնելով դրանք առավել բաց, հասանելի և արդյունավետ:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 2022 – «Վ. Բոյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամ (2022), *ԲՊՀ Գիտական խորհրդի 28.12.-2022 N° 5 նիստ* [Կանոնակարգ], Երևան [«Վ. Bryowsovi anvan petakan hamalsaran» himnadram (2022), BPH Gitakan xorhrdi 28.12.2022. N° 5 nist [Kanonakarg], Yerevan];

BARTON, WATERS 2004 – Barton, M.R., Waters, M.M. (2004), *Creating an Institutional Repository*, Cambridge: MIT Libraries, 134;

CROW 2002 – Crow, R. (2002). *The Case for Institutional Repositories: A SPARC Position Paper*, Washington: SPARC, 37;

LYNCH 2003 – Lynch, C.A. (2003), *Institutional Repositories: Essential Infrastructure for Scholarship in the Digital Age*, *John Hopkins University Press*, Baltimore, 2(3), 327-336;

WILLINSKY 2009 – Willinsky, J. (2006). *The Access Principle: The Case for Open Access to Research and Scholarship*. Cambridge: MIT Press, 312.

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

DIGITAL REPOSITORIES AS A TOOL FOR UNIVERSITY SCIENTIFIC VISIBILITY *On the Example of the Library of Brusov State University*

NARINE HARUTYUNYAN
Brusov State University Library

Բանալի բաներ՝ Digital Repository, Academic Library, Brusov State University, Open Access, Scholarly Visibility, Metadata.

The implementation and development of digital repositories represent one of the key directions in the modernization of the contemporary university information environment. They not only contribute to the effective management of knowledge but also ensure the systematic digitization and long-term preservation of scientific heritage, thereby creating an open and accessible academic information space.

The experience of the Library of Brusov State University demonstrates that the effective functioning of a digital repository is based on both technological solutions and organizational cooperation. In particular, close collaboration between library professionals and researchers is essential, as it ensures the comprehensive collection of scientific materials, high-quality metadata description, and stable accessibility. At the same time, the consistent implementation of open science principles and adherence to copyright regulations create a balanced environment in which scientific outputs become more visible and accessible without violating legal requirements. This approach also contributes to enhancing the university's academic reputation and strengthening its position in the international scholarly community. It can be stated that the development of digital repositories is an irreversible process driven by the demands of the information society. It is not only a technological innovation but also a transformation of academic culture that reshapes traditional models of knowledge creation, preservation, and dissemination, making them more open, accessible, and efficient.